



Քաղաքացիական հասարակության ինստիտուտ /ԲՀԻ/ և
Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա /FIDH/

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ ՄԱԿ-Ի ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ
ԿՈՄԻՏԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատրաստվել է Քաղաքացիական հասարակության ինստիտուտի
(Հայաստանի Հանրապետություն, Երևան) և
Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) կողմից

Հայաստանի Հանրապետություն, Երևան

ԱՊՐԻԼ, 2012

1. Համառոտ ակնարկ

1. Սույն զեկույցն անդրադառնում է Հայաստանում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքին առնչվող խնդիրներին: Այն տեղեկություններ է ներկայացնում Հայաստանում օրենսդրական համակարգի և փաստացի իրավիճակի վերաբերյալ՝ կոնկրետ դեպքերի օրինակների հիման վրա, որոնք ներկայացնում են խոշտանգումների կիրառման պրակտիկան:
2. ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածը նախատեսում է, որ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»: Սակայն ՀՀ Քրեական օրենսգիրքը չի նախատեսում «խոշտանգում» եզրույթով հանցակազմ, որը կհամապատասխանի ՄԱԿ-ի Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայի 1(1) հոդվածին: ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն կոչ է արել օրենսդրական փոփոխություններ կատարել «խոշտանգում» սահմանումը ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 1 հոդվածին համապատասխանեցնելու համար¹: Սակայն մինչ օրս փոփոխություններ չեն կատարվել:
3. Խոշտանգումները հիմնականում իրագործվում են իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից (նստիկանության կողմից) ձերբակալության և հարցաքննության ընթացքում՝ խոստովանություն ստանալու նպատակով: Խոշտանգումների վերաբերյալ մեղադրանքների քննության անկախությունը և արդյունավետությունը վտանգված են, քանի որ նստիկանությունն է պատասխանատու այդ քննություններն անցկացնելու համար: Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) ստեղծվել է 2007 թվականին և օժտված է պետական պաշտոնատար անձանց նկատմամբ հարուցված քրեական գործերով նախաքննություն իրականացնելու իրավասությամբ: Սակայն Դատախազությունը չի ուղարկում խոշտանգումների վերաբերյալ բոլոր հաղորդումները ՀՔԾ-ի քննությանը, փոխարենը՝ հիմնականում նստիկանության քննիչներն են զբաղվում այդ գործերով: Արդյունքում, խոշտանգումների վերաբերյալ հաղորդումները քննության են առնվում այն կառույցի կողմից, որտեղ գործում են խոշտանգումների կիրառման համար պատասխանատու անձինք:
4. Ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի դեպքերի մեծամասնությունն անհայտ է մնում վրեժխնդրության վախի պատճառով, իսկ, երբ դեպքերի վերաբերյալ, այնուամենայնիվ, հաղորդում է ուղարկվում՝ արդյունավետ քննություն հազվադեպ է

¹ Խոշտանգումների դեմ կոմիտեի եզրափակիչ ղիտարկումներ. Հայաստան, հրապարակվել է 2000, նոյեմբերի 17, պարբերություն 39 [http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/\(Symbol\)/A.56.44.paras.33-39.En?OpenDocument](http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/(Symbol)/A.56.44.paras.33-39.En?OpenDocument):

իրականացվում: Այս զեկույցից ակնհայտ է դառնում, որ խոշտանգումների դեպքերը հիմնականում անպատիժ են մնում:

5. Հիմնականում իրավապաշտպանները և լայն հասարակությունը տեղեկանում են խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի դեպքերի մասին, երբ գոհերը մահանում են իրենց նկատմամբ կիրառված բռնությունների հետևանքով (օրինակ՝ Լևոն Գուլյանի, Վահան Խալաֆյանի գործերը):
6. Ավելին, փաստաբան, բժիշկ ներգրավելու, հարազատներին տեղեկացնելու և իրենց իրավունքների մասին իրազեկ լինելու իրավունքները երաշխավորված չեն ոստիկանություն բերման ենթարկելու առաջին իսկ պահից:
7. Փաստաբանը կամ խոշտանգումների ենթարկված տուժողը չեն կարող անմիջականորեն դիմել դատաբժշկական փորձագետի՝ բժշկական զննություն իրականացնելու համար, քանի որ նման զննությունն իրականացվում է նախաքննություն իրականացնող մարմնի, քննիչի կամ դատախազի որոշման հիման վրա²: Երբեմն բժշկական զննությունը կազմակերպվում է ուշացումով, և եզրակացությունները չեն տրամադրվում կասկածյալին/մեղադրյալին կամ նրա փաստաբանին:

² ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 243:

Բովանդակություն

1. Համառոտ ակնարկ	2
2. Ներածություն	7
3. Ընդհանուր տեղեկություններ	7
4. Խոշտանգման սահմանումը և քրեականացումը (Կոնվենցիայի 1 և 4 հոդվածներ)	8
5. Խոշտանգումները կանխարգելող ոչ արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական կամ այլ միջոցներ (Կոնվենցիա, հոդված 2)	12
(i) Պաշտպան ունենալու և ձերբակալության մասին տեղեկացնելու իրավունք	12
(ii) Բժշկի դիմելը	14
(iii) Իրավունքների վերաբերյալ տեղեկացնելը	15
6. Խոշտանգումների վերաբերյալ բողոքների անհապաղ և անաչառ քննություն (Կոնվենցիա, հոդված 12)	17
7. Խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքների անթույլատրելիությունը (Կոնվենցիա, հոդված 15)	19
8. Ազատությունից զրկելու պայմանները և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ (Կոնվենցիա, հոդված 16).....	20
9. Բողոք ներկայացնելու մեխանիզմները քրեակատարողական հիմնարկներում ազատագրված անձանց համար (Կոնվենցիա, հոդված 13)	23
10. Կոմիտեի կողմից նշված կոնկրետ գործերի վերաբերյալ տեղեկություններ.....	24
11. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ	29

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ

Քաղաքացիական հասարակության ինստիտուտը (ՔՀԻ) իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է, որը հիմնվել է Երևանում 1998 թվականին: ՔՀԻ նպատակն է աջակցել Հայաստանում ազատ, ժողովրդավարական հասարակության կայացման գործընթացին: 2001թ. ՔՀԻ-ն պայքարում է խոշտանգումների դեմ՝ ազատագրկման վայրերում դիտորդական առաքելություն իրականացնելով, դեպքերի մասին զեկույցներ հրապարակելով և հասարակությանն իրազեկելով:

2005թ. Քաղաքացիական հասարակության ինստիտուտն իրականացրել է ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության ստորագրմանը և վավերացմանն ուղղված քարոզարշավ: Արդյունքում, 2006թ. Հայաստանը վավերացրեց Կամընտիր արձանագրությունը:

Հիմնադրման պահից ՔՀԻ-ն գործունեություն է ծավալել քաղաքացիական հասարակության զարգացման, քրեակատարողական համակարգի բարեփոխումների, մարդու իրավունքների պաշտպանության և հանրային իրազեկման, խաղաղաշինության և կոնֆլիկտի հաղթահարման, տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն, շահերի պաշտպանության և լոբբինգի ոլորտներում:

ՔՀԻ-ն հանդիսանում է Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) հայաստանյան անդամ կազմակերպությունը:

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա (FIDH)

Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան միավորում է շուրջ 164 իրավապաշտպան ՀԿ-ների՝ ավելի քան 100 երկրներում: Կազմակերպությունը ստեղծվել է 1922թ. և խորհրդատվական կարգավիճակ է ունեցել ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդում (ECOSOC):

Փաստերի հավաքագրում, քննության և դատավարությունների դիտորդական առաքելությունների իրականացում

Իրականացնելով մի շարք գործողություններ՝ կազմակերպելով միջազգային հետաքննչական առաքելություններ, դատավարությունների դիտորդություն, FIDH-ը մշակել է փաստեր հավաքագրելու և խախտումների համար պատասխանատուներին բացահայտելու հստակ և անկողմնակալ ընթացակարգեր: Առաքելություններ իրականացնող փորձագետները համագործակցում են FIDH-ի հետ՝ կամավորական հիմունքներով:

Վերջին 25 տարիների ընթացքում FIDH-ն իրականացրել է ավելի քան 1,500 առաքելություն 100 –ից ավելի երկրներում: Այդ գործողություններն ամրապնդել են FIDH-ի՝ շահերի պաշտպանության քարոզարշավները:

Աջակցություն քաղաքացիական հասարակությանը, դասընթացներ և փորձի փոխանակում

FIDH-ը կազմակերպում է բազմաթիվ միջոցառումներ իր անդամ կազմակերպությունների հետ համատեղ՝ այն երկրներում, որտեղ նրանք գտնվում են: Հիմնական նպատակն է ուժեղացնել իրավապաշտպանների ազդեցությունը և կարողությունը՝ տեղական մակարդակում փոփոխությունների ընթացքին նպաստելու համար:

Միջազգային համայնքի մոբիլիզացում - Շահերի պաշտպանություն միջկառավարական մարմիններում

FIDH-ն աջակցում է անդամ կազմակերպություններին և տեղական գործընկերներին՝ միջկառավարական կազմակերպությունների միջպետական կազմակերպություններում տարվող աշխատանքներին: FIDH-ը տեղեկացնում է միջազգային կազմակերպություններին մարդու իրավունքների խախտումների մասին և անհատական գործեր փոխանցում այդ մարմիններին: FIDH-ը մասնակցում է միջազգային իրավական գործիքների մշակմանը:

Իրազեկում և հաշվետվություն - Հասարակական կարծիքի մոբիլիզացում

FIDH-ն իրազեկում և մոբիլիզացնում է հասարակական կարծիքը: FIDH-ն օգտագործում է հաղորդակցության բոլոր միջոցները մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ իրազեկման մակարդակը բարձրացնելու համար՝ մամուլի հաղորդագրությունների, մամուլի ասուլիսների, իշխանություններին ուղղված բաց նամակների, զեկույցների, հրատապ բողոքների, խնդրագրերի, քարոզարշավների, ինտերնետային կայքերի և այլ միջոցներով:

2. Ներածություն

1. Սույն զեկույցը ներկայացվել է Խոշտանգումների դեմ կոմիտեին՝ (այսուհետ՝ կոմիտե) Հայաստանի երրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու նպատակով: Ակնկալում ենք, որ զեկույցը թույլ կտա ընդլայնել կոմիտեի հնարավորությունը պետության կողմից ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կատարումը գնահատելու համար:

3. Ընդհանուր տեղեկություններ

2. Հայաստանը ցամաքային պետություն է Հարավային Կովկասում: Հայաստանի անկախությունը պաշտոնապես հռչակվել է 1991թ. սեպտեմբերի 21-ին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո:
3. ՀՀ Սահմանադրության համաձայն, Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (ՀՀ Սահմանադրություն, հոդված 2): Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա (ՀՀ Սահմանադրություն, հոդված 5):
4. 2008թ. Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ Մերժ Սարգսյանը երդում տվեց որպես ՀՀ Նախագահ: Հայաստանի Հանրապետական կուսակցությունը գերակայում է Խորհրդարանի երեք կուսակցություններից բաղկացած իշխող կոալիցիայում:
5. Հասարակական կազմակերպությունները զգալի թվով հայտարարություններ են արել անազատության պայմաններում խոշտանգումների և վատ վերաբերմունքի մասին: Լիարժեք քննություններ այդ հաղորդումների կապակցությամբ չեն իրականացվել, և մեղավոր անձինք պատասխանատվության չեն ենթարկվել: Եվրախորհրդի՝ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (CPT) հրապարակել է զեկույց 2010թ. այցի կապակցությամբ, որում արձանագրել է «զգալի թվով արժանահավատ և համահունչ հայտարարություններ անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վերջերս դրսևորված ֆիզիկական բնույթի վատ վերաբերմունքի մասին», ինչպես նաև՝ ձերբակալվածների նկատմամբ կիրառված խոշտանգումների մասին, որոնք ենթադրաբար կիրառվել են ցուցմունք կորզելու կամ այլ տեղեկություններ ստանալու նպատակով³:

³ Չեկույց Հայաստանի կառավարությանը Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական

6. Վերջին տաս տարիների ընթացքում մի շարք փոփոխություններ են տեղի ունեցել քրեակատարողական համակարգում: 2001թ. բանտային համակարգը Ներքին գործերի նախարարությունից փոխանցվեց Արդարադատության նախարարությանը: Արդյունքում, խոշտանգումները և անմարդկային վերաբերմունքն ազատագրկման մեջ պահվող անձանց նկատմամբ, խոստովանություն կորզելու նպատակով, կրճատվեց: Սակայն խոշտանգումների պրակտիկան շարունակվում է ոստիկանության կառույցներում, ինչպես նաև արձանագրվել են դեպքեր քրեակատարողական հիմնարկներում, որտեղ խոշտանգումները կիրառվում են որպես պատիժ:
7. ՀՀ պատմության ճգնաժամային իրադարձություններից է 2008թ. փետրվարի 19-ին կայացած նախագահական ընտրությունները և դրան հաջորդած զարգացումները, երբ բախումներ տեղի ունեցան իրավապահների և քաղաքական ընդդիմադիրների միջև, որոնք բողոքի ցույցեր էին անցկացնում ընտրությունների արդյունքների դեմ: Տեղի ունեցան զանգվածային ձերբակալություններ և կալանավորումներ, զոհվեց 10 մարդ, իսկ 200-ը՝ ստացան վնասվածքներ: Դրան հաջորդեցին քրեական հետապնդումներ ցույցերի կազմակերպիչների հանդեպ: Ավելի քան 5,000 մարդ ձերբակալվեց մի քանի ժամով, և 110 ընդդիմադիրների դեմ մեղադրանքներ առաջադրվեցին և դատավարություններ իրականացվեցին «զանգվածային անկարգություններ», «զենք կրել», «իշխանության ներկայացուցչին դիմադրել», «իշխանության ներկայացուցչի պահանջին չենթարկվել» հանցագործությունների համար: Հայտարարված համաներման հիման վրա մարտի 1-ի դեպքերի առնչությամբ ազատագրված անձինք ազատ են արձակվել:
8. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան (Կոնվենցիա) 1993թ. սեպտեմբերի 13-ին: Վավերացումից հետո Հայաստանը չի արել 21-րդ և 22-րդ հոդվածների համաձայն հայտարարություն՝ այդպիսով չի ճանաչել անհատական զանգատներ ստանալու և քննարկելու Կոմիտեի իրավասությունը:

4. Խոշտանգման սահմանումը և քրեականացումը (Կոնվենցիայի 1 և 4 հոդվածներ)

9. Խոշտանգումը քրեականացվել է և սահմանված է ՀՀ Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով: Սակայն այդ սահմանումը չի համապատասխանում Կոնվենցիայի 1-ին հոդվածին մի շարք հիմքերով:

կոմիտեի (CPT) 2010թ. մայիսի 10 – 21 Հայաստան կատարած այցելության վերաբերյալ, 12-րդ պարբերություն, http://www.gov.am/u_files/file/kron/CPT_arm_final.pdf:

(I) ՀՀ Քրեական օրենսգրքի 119-րդ հոդված. խոշտանգման սահմանումը չի համապատասխանում Կոնվենցիային

10. Ըստ ՀՀ Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի, խոշտանգումը ցանկացած այնպիսի գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով (դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը)⁴: Հետևաբար, եթե գործողությունը ծանր կամ միջին ծանրության վնաս է հասցրել որևէ անձի առողջությանը, այն դուրս է մնում «խոշտանգում» սահմանումից, և այդպիսի արարքը գործած անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության 112-րդ և 113-րդ հոդվածների հիման վրա: Խոշտանգումը պատժվում է մինչև երեք տարի ազատազրկմամբ, իսկ ծանրացուցիչ հանգամանքների առկայության դեպքում՝ երեքից յոթ տարի ազատազրկմամբ:
11. Քրեական օրենսգրքով նախատեսված «խոշտանգում» սահմանումը չի ներառում անձի առողջությանը դիտավորությամբ միջին կամ ծանր վնաս պատճառելը, ինչը հանգեցնում է նրան, որ խոշտանգումն ընկալվում է հանրության համար պակաս վտանգավոր հանցագործություն: «Խոշտանգումը», ինչպես այն սահմանված է Քրեական օրենսգրքում, համարվում է միջին ծանրության հանցագործություն⁵: Խոշտանգման հանցակազմն, ըստ Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի, չի ներառում հատուկ նպատակ և որոշակի սուբյեկտներ:

⁴ **ՀՀ Քրեական օրենսգրք, Հոդված 112. Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը**
1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

Հոդված 113. Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը
1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար եւ չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է առողջության տեսական քայքայում կամ ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ՝ պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

⁵ Ըստ Քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարին: Ծանրացուցիչ հանգամանքների բացակայության դեպքում խոշտանգման համար նախատեսվում է երեք տարի ազատազրկում:

8. Քրեական գործ հարուցելու համար կիրառվում է «խոշտանգում» հանցակազմը: Քրեական հետապնդում նախաձեռնելու համար անհրաժեշտ է տուժողի բողոքը: Տուժողի և հանցագործությունը կատարողի միջև (կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ) հաշտության դեպքում քրեական գործը կարճվում է:
12. Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ խոշտանգում հանցագործության համար համապատասխան հանցակազմի բացակայությունը Հայաստանում հանգեցնում է այն բանի, որ Կոնվենցիայով սահմանված խոշտանգում կիրառողները հետապնդվում են պաշտոնական լիազորությունները չարաշահելու, լիազորություններն անցնելու կամ անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար⁶: Արդյունքում, Կոնվենցիայի սահմանման համաձայն խոշտանգումների գործերով դատավարությունների դիտորդությունը ՀԿ-ների և հասարակության կողմից բարդանում է, իսկ խոշտանգումների վերաբերյալ վիճակագրությունն՝ աղավաղվում:
13. Հարկ է նշել, որ այդ հանցագործությունները կատարողները որոշ դեպքերում խուսափում են քրեական հետապնդումից կամ պատժից համաներման կամ ներման միջոցով⁷: Այսպիսով, Դատական դեպարտամենտի կողմից տրամադրած վիճակագրության համաձայն⁸
- 2008թ. 2 անձ դատապարտվել են ՀՀ Քրեական օրենսգրքի 119 հոդվածով /Խոշտանգում/: 1 անձի նկատմամբ կիրառվել է բժշկական հարկադրանքի միջոց:
 - 2009թ. 2 անձ դատապարտվել են ՀՀ Քրեական օրենսգրքի 119 հոդվածով: Մեկն ազատ է արձակվել համաներման հիման վրա:
 - 2010թ. 119 հոդվածով ոչ ոք չի դատապարտվել:
 - 2011թ. երեք անձ դատապարտվել են 119 հոդվածով: Նրանցից երկուսի նկատմամբ կիրառվել է համաներման որոշում:
14. 119-րդ հոդվածով չի հստակեցվում խոշտանգումները որպես պաշտոնատար անձանց կողմից կատարված գործողություն: Հոդվածը կիրառվում է երկու քաղաքացիների միջև հորիզոնական հարաբերությունների դեպքում՝ առանց պաշտոնատար անձի ներգրավման:

⁶ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր, Ուսումնասիրություն Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարումը Հայաստանի դատարանների կողմից 2009թ. Երևան, էջ. 10 http://www.undp.am/docs/publications/CAT_report_2009_arm.pdf:

⁷ Նույն փաստաթուղթը:

⁸ Դատական դեպարտամենտի նամակ, Ե-4148, 2011թ. 21 հունիսի:

Այսպես, մի դեպքում տղամարդը պարբերաբար ծեծել է կնոջը, ում հետ ապրում էր և դրդել է նրան մարմնավաճառությամբ զբաղվել: 2011թ. մայիսին Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը նրան մեղավոր է ճանաչել նաև 119-րդ հոդվածի հատկանիշներով: Սակայն նա ազատ է արձակվել համաներման որոշման հիման վրա, որը կիրառել է Վերաքննիչ դատարանը 2011թ. հուլիսի 21-ին⁹:

Մեկ այլ գործում, հացի արտադրամասի հացթուխը և բանվորը առևանգել են երկու այլ բանվորների և խոշտանգել՝ պարզելու, թե արդյոք նրանք մասնակցել են արտադրամասում տեղի ունեցած գողությանը: Նրանց նկատմամբ այլ հոդվածների շարքում կիրառվել է նաև 119 հոդվածը¹⁰: 2011թ. հուլիսի 21-ի և հունվարի 26-ի՝ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումներով երկու մեղադրյալներ դատապարտվել են: Որոշումը բողոքարկվել է Վերաքննիչ դատարանում, որն անփոփոխ է թողել այդ որոշումները 2011թ. դեկտեմբերի 2-ին:

15. Ինչ վերաբերում է ՀՀ-ում խոշտանգումների սահմանմանը, 2000թ. ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն կոչ է արել Հայաստանի կառավարությանն օրենսդրական փոփոխություններ կատարել՝ խոշտանգում սահմանումը ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի համապատասխանեցնելու նպատակով¹¹: Մինչ օրս օրենսդրական ոչ մի փոփոխություն չի կատարվել:

(II) Քրեական օրենսգրքի 341(2) հոդված. Ցուցմունք ձեռք բերելու նպատակով խոշտանգումների կիրառման քրեականացում

16. Քրեական օրենսգրքի 341(2) հոդվածով դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով՝ վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև

⁹ Գործ համար ԵԱԴԴ/0109/01/10 Արմեն Խաչատրյանի դեմ, Վերաքննիչ դատարանի 2011թ. հուլիսի 21 որոշում

¹⁰ Գործի համար ԵԱԲԴ/0032/01/10 Հրանտ Մխոյանի և Եգոր Հակոբյանի դեմ, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. հունվարի 26-ի որոշում (Եգոր Հակոբյանի վերաբերյալ) և 2011թ.-ի հուլիսի 21 (Հրանտ Մխոյանի վերաբերյալ):

¹¹ Խոշտանգումների դեմ կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ, ՀՀ, հրապարակվել է 2000թ. նոյեմբերի 17-ին, 39-րդ պարբերություն [http://www.unhcr.ch/tbs/doc.nsf/\(Symbol\)/A.56.44.paras.33-39.En?OpenDocument](http://www.unhcr.ch/tbs/doc.nsf/(Symbol)/A.56.44.paras.33-39.En?OpenDocument).

թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը խոշտանգմամբ կամ այլ բռնությամբ՝ պատժվում է երեքից ութ տարի ազատազրկմամբ:

17. Այս հոդվածը քրեականացնում է խոշտանգումները որպես ցուցմունք կամ կեղծ վկայություն տալուն հարկադրելու միջոց միայն *դատավարության ընթացքում*: Այսինքն, չի քրեականացվում խոշտանգումը Կոնվենցիայում նախատեսված այդ հասկացության իմաստով, որի համաձայն, այն կատարվում է կամ հրահրվում է պաշտոնատար անձի կողմից մի շարք այլ ոլորտներում, ինչպիսիք են քրեակատարողական հիմնարկները, զինված ուժերը և այլն¹²:
18. Ավելին, ուժեղ ցավը կամ տառապանքը, որը պատճառում է քննիչը կամ ոստիկանության աշխատակիցը երրորդ անձից ցուցմունք կորզելու նպատակով կամ բացատրություններ, հաղորդում կամ խոստովանություն ստանալու համար, դուրս են մնում սահմանումից: Բոլոր նման դեպքերում պաշտոնատար անձը քրեական հետապնդման է ենթարկվում իր լիազորություններն անցնելու կամ անձի առողջությանը ծանր վնաս հասցնելու համար¹³: 2008թ. մինչև 2011թ. 341-րդ հոդվածի հիման վրա գործեր չեն հարուցվել: Այդ հոդվածը հազվադեպ է կիրառվում: Խոշտանգումների վերաբերյալ մեղադրանք ներառող գործերի առնչությամբ հիմնականում կիրառվում է 309-րդ հոդվածը (Պաշտոնեական լիազորություններն անցնելը):

Առաջարկություն

- *Փոփոխություններ կատարել Քրեական օրենսգրքում և համապատասխան օրենսդրության մեջ՝ համապատասխանեցնելով խոշտանգման սահմանումը Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին:*

5. Խոշտանգումները կանխարգելող ոչ արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական կամ այլ միջոցներ (Կոնվենցիա, հոդված 2)

(i) Պաշտպան ունենալու և ձերբակալության մասին տեղեկացնելու իրավունք

19. ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն, հանցագործությունների մասին հաղորդումներ ստանալուց հետո գործ հարուցելու

¹² ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, Հետազոտություն՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառումը Հայաստանի դատարանների կողմից, 2009թ., Երևան, էջ. 10
http://www.gov.am/u_files/file/kron/CPT_arm_final.pdf

¹³ Նույն փաստաթուղթը

առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել բացատրություններ: Այդ դեպքերում անձը կարող է կանչվել ոստիկանություն առանց պաշտոնապես հայտարարված կարգավիճակի (օրինակ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ վկա և այլն): Այդ փուլում օրենքով չի նախատեսվում, որ անձն իրավունք ունի տեղեկացնել իր հարազատներին, ունենալ պաշտպան կամ բժիշկ և կարող է ունենալ բոլոր այն իրավունքները, որոնք ունեն ձերբակալված և կալանավորված անձինք: Այդ իրավունքներից նրանք օգտվում են միայն, երբ կազմվում է ձերբակալման արձանագրությունը¹⁴:

20. ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 131¹ հոդվածի համաձայն հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն: Մակայն պրակտիկան ցույց է տալիս, որ ձերբակալման մասին արձանագրություն կազմելուն նախորդող ազատությունից զրկելու ժամանակահատվածը հաճախ գերազանցել է երեք ժամը: Այդ ժամանակը հաճախ օգտագործվում է խոստովանական ցուցմունքներ կորզելու և (կամ) ապացույցներ ձեռք բերելու համար՝ նախքան արգելանքի վերցված անձին պաշտոնապես կասկածյալ ճանաչելը և իր իրավունքների մասին տեղեկացնելը¹⁵:

Օրինակ, մինչև քրեական գործի հարուցումը 2010թ. հունվարի 11-ին և 14-ին Ստեփան Հովակիմյանին հրավիրել են ոստիկանություն առանց պատշաճ ծանուցման: 2010 թ. փետրվարի 6-ին Ստեփան Հովակիմյանը կրկին ներկայացել է Երևան քաղաքի վարչություն, որտեղ նրան ենթարկել են խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Ս. Հովակիմյանին թույլ են տվել տեղեկացնել հարազատներին իր ձերբակալության մասին և պաշտպան հրավիրել միայն նրա ինքնախոստովանական ցուցմունքը ստանալուց հետո¹⁶:

21. Ուստի առկա են լուրջ մտահոգություններ արգելանքի տակ գտնվող անձանց պաշտպան ունենալու հնարավորությունը միայն պաշտոնապես որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելուց հետո, այլ ոչ արգելանքի տակ վերցնելու փաստացի

¹⁴ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն կասկածյալը կարող է պաշտպան ունենալ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարելու պահից:

¹⁵ Ջեկույց Հայաստանի կառավարությանը Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (CPT) 2011թ. մայիսին Հայաստան կատարած այցելության վերաբերյալ, CPT/Inf (2011) 24, Ստրասբուրգ, 2011թ. օգոստոսի 17, 9-րդ պարբերություն http://www.gov.am/u_files/file/kron/CPT_arm_final.pdf:

¹⁶ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի /FIDH/ և Քաղաքացիական հասարակության ինստիտուտի համատեղ հայտարարությունը 2012թ. փետրվարի 23, տես <http://hra.am/hy/events/2012/02/23/statement>:

պահից ընձեռնելու պրակտիկայի վերաբերյալ:

22. Ավելին, պաշտպանը հազվադեպ է ներկա լինում սկզբնական հարցաքննություններին: Հայաստանում վատ վերաբերմունքի և խոշտանգումների վերաբերյալ անցկացված մի հետազոտության համաձայն 10 ձեռքարկվածից միայն մեկն ուներ պաշտպան, ընդ որում, նա անչափահաս էր, և ըստ Քրեական օրենսգրքի 69 (1) հոդվածի 5-րդ կետի, պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:¹⁷

(ii) Բժշկի դիմելը

23. Ձերբակալված և կալանավորված անձանց բժիշկ հրավիրելու իրավունքը պայմանավորված է նրանց առողջական խնդիրների և մարմնական վնասվածքների առկայությամբ: 2002թ. փետրվարի 26-ին ընդունված «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը:

24. Սույն հոդվածի համաձայն, բժշկական զննությունն իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Ընդ որում, բժշկական տեղեկանքները հասանելի են բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց¹⁸:

25. Ձերբակալվածների պահելու վայրերի (ՁՊՎ) մեծամասնությունում բացակայում է բուժանձնակազմը: Միայն Երևանի ՁՊՎ-ն է ապահովված համապատասխան բժշկական պայմաններով և կա բուժքույր: Առաջին բուժօգնության աշխատանքները թողնված են հերթապահ ոստիկանի վրա, որը չունի համապատասխան բժշկական կրթություն կամ տարրական գիտելիք: Առաջին բուժօգնությունը ցուցաբերվում է շտապօգնության միջոցով, որոնց աշխատանքը մարզերում դժվարացնում են թե՛ եղանակային պայմանները, և թե՛ ճանապարհի հեռավորությունը¹⁹:

¹⁷ Հայաստանի վերաբերյալ զեկույց «Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքար և վատ վերաբերմունքի արդյունավետ քննությունը», Էրիկ Սվանիձե, 2010թ. Երևան, «Անտարես», 18-րդ պարբերություն:

¹⁸ Չեկույց Հայաստանի կառավարությանը Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (CPT) 2011թ. մայիսին Հայաստան կատարած այցելության վերաբերյալ, 33-րդ պարբերություն, http://www.gov.am/u_files/file/kron/CPT_arm_final.pdf:

¹⁹ Հայաստանի Հանրապետության Ոստիկանության համակարգի Ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2010 թվականի գործունեության մասին հաշվետվություն, 2011թ., Երևան, էջ 34, <http://www.osce.org/hy/yerevan/78778>:

26. Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը պարզել է, որ նման գործելաոճը չի համապատասխանում 05.06.2008 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 179-րդ ենթակետին և ՁՊՎ-ներում պահվում են ձերբակալված անձինք, որոնք մասնագիտական բուժօգնության կարիք ունեն։²⁰
27. Գործնականում, ՁՊՎ-ներ բժշկական անձնակազմ չի հրավիրվում անգամ հայտնաբերված վնասվածքների զննության համար: Այն վնասվածքները, որոնք քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կարծիքով լուրջ չեն և չեն սպառնում անձի առողջությանը, պարզապես նշվում են ձերբակալված անձի զննության մասին արձանագրության կամ անձի վրա հայտնաբերված նշանների և հետքերի վերաբերյալ հատուկ ձևի մեջ: Փաստաբանները նշում են, որ ձերբակալված անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունները և փաստաթղթերը ուշացումով են տրամադրվում²¹:
28. Ինչպես վերը նշվել էր, պաշտպան ունենալու և հարազատներին տեղեկացնելու իրավունքների պես բժշկին դիմելու հնարավորությունը չի ապահովվում ազատագրկման փաստացի պահից:
29. ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա: Ո՛չ պաշտպանը, ո՛չ էլ խոշտանգման գոհը չեն կարող անմիջականորեն դիմել դատաբժշկական փորձագետի `բժշկական փորձաքննություն անցկացնելու համար:

(iii) Իրավունքների վերաբերյալ տեղեկացնելը

30. Իրենց իրավունքների մասին տեղեկանալու իրավունքն ապահովվում է միայն ձերբակալության մասին արձանագրություն կազմելուց հետո: Այսինքն, այդ իրավունքի ապահովումը փաստացի ուշանում է: Գործնականում անձի իրավունքների մասին գրավոր փաստաթուղթը չի տրամադրվում ձերբակալված

²⁰ ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի 179-րդ ենթակետի համաձայն ՁՊՎ-ում չի թույլատրվում պահել հոգեկան, սուր վարակիչ և մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող ձերբակալվածներին: Նշված անձինք ՁՊՎ-ի բուժաշխատողի կամ շտապ բուժօգնության բժշկի գրավոր եզրակացությամբ և դրա հիման վրա` ոստիկանության մարմնի պետի որոշմամբ փոխադրվում են հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն:

²¹ Ջեկույց Հայաստանի վերաբերյալ «Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքար և վատ վերաբերմունքի արդյունավետ քննությունը», Էրիկ Սվանիձե, 2010թ. Երևան, «Անտարես», 19-րդ պարբերություն:

Առաջարկություններ

- *Իրականացնել դատական համակարգի բարեփոխումներ՝ երաշխավորելով պաշտպան ունենալու, հարազատներին տեղեկացնելու, իրավունքների մասին իրազեկված լինելու, բուժզննություն անցնելու և այլ իրավունքներն անձին փաստացի արգելանքի վերցնելու իսկ պահից՝ անկախ օրենքով նախատեսված իր իրավական կարգավիճակից:*
- *Գործնական միջոցներ ձեռնարկել մինչդատական վարույթի սկզբնական փուլից պաշտպանի ներգրավումն ապահովելու համար:*
- *Լրացում կատարել Քրեական դատավարության օրենսգրքում, որի համաձայն բոլոր այն դեպքերում, երբ անձը հարցաքննվել է պաշտպանի բացակայությամբ, նույնիսկ այն դեպքերում, երբ անձը հրաժարվել է պաշտպանից, գրավոր նախաքննական ցուցմունքն ապացույց չհամարվի, եթե հարցաքննված անձը չի հաստատում այդ ցուցմունքը դատարանի առջև:*
- *Կատարել օրենսդրական փոփոխություններ, որոնք թույլ կտան բացառել «արատավորված» ապացույցները, եթե դատավորը հիմնավոր կասկած ունի դրանց ձեռք բերման միջոցների օրինականության վերաբերյալ:*
- *Ապահովել կալանավորված և ձերբակալված անձանց բուժզննությունը ոստիկանության և քրեակատարողական համակարգի ծառայողների լսողության և տեսողության սահմաններից դուրս, ինչպես դա նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ:*
- *Ապահովել ձերբակալված անձանց բժշկական փաստաթղթերի և եզրակացության անհապաղ տրամադրումը պաշտպանին:*
- *Հնարավորություն ստեղծել, որպեսզի անկախ բժիշկները ստանան դատաբժշկի որակավորում և իրավունք ընձեռել ձերբակալված և կալանավորված անձանց բժշկական զննություն անցնել անկախ մասնագետի մոտ՝ առանց քննիչի, դատախազի կամ դատավորի որոշման:*

²² Նույն փաստաթուղթը, 23-րդ պարբերություն և Ջեկույց Հայաստանի կառավարությանը Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (CPT) 2010թ. մայիսի 10-21 Հայաստան կատարած այցելության վերաբերյալ, 36-րդ պարբերություն:

6. Խոշտանգումների վերաբերյալ բողոքների անհապաղ և անաչառ քննություն (Կոնվենցիա, հոդված 12)

31. Հայաստանում դատական բարեփոխումների արդյունքում դատախազության համակարգից հանվել է քննչական բաժինը: Դատախազությունն այժմ իրականացնում է հսկողություն նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ, սակայն չի կարող քննչական գործողություններ իրականացնել: Խոշտանգումների վերաբերյալ հայտարարություն ստանալուց հետո դատախազությունը պարտավոր է այն ընդունել որպես հաղորդում հանցագործության մասին և փոխանցել համապատասխան քննչական մարմին:
32. 2007թ. ստեղծվել է առանձին մասնագիտացված մարմին՝ Հատուկ քննչական ծառայություն (ՀՔԾ): ՀՔԾ-ի մասին օրենքը ուժի մեջ է մտել 2007թ. դեկտեմբերի 1-ին: ՀՔԾ-ի պետը նշանակվում է Հայաստանի նախագահի կողմից՝ Գլխավոր դատախազի առաջարկության հիման վրա: Իր կողմից նշանակված տեղակալի հետ միասին, ՀՔԾ պետը ղեկավարում է 25 հատուկ քննիչներ ներառող անձնակազմը: ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հատուկ ծառայության քննիչները կատարում են պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ կամ նրանց կողմից կատարած հանցագործությունների նախաքննություն: Ինչպես և այլ քննչական մարմինների դեպքում, ՀՀ Գլխավոր դատախազությունը հսկողություն է իրականացնում ՀՔԾ-ի կողմից անցկացվող նախաքննության նկատմամբ: ՀՔԾ-ն համագործակցում է ոստիկանության հետ, սակայն անմիջական կապ չունի նրա հետ: ՀՔԾ-ն պատասխանատվություն չի կրում ոստիկանության գործունեության համար և հակառակը:
33. Այնուամենայնիվ, պրակտիկայում խոշտանգումների հաղորդումների ստուգումների բացարձակ մեծամասնությունն իրականացվում է ոստիկանության քննիչների կողմից²³: Գոյություն չունեն ուղեցույցեր, որոնք պահանջում են ուղարկել այդ գործերն իրավասու մարմնին: Ավելին, քրեական դատավարության օրենսգրքի 53(2) հոդվածի 3-րդ կետը լիազորություն է տալիս դատախազին ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից և հանձնել նախաքննության մարմնին, քրեական գործն օրենսգրքի 190 հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով:

²³ Ջեկույց Հայաստանի վերաբերյալ «Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքար և վատ վերաբերմունքի արդյունավետ քննությունը», Էրիկ Սվանիձե, 2010 թ. Երևան, «Անտարես», 41-րդ պարբերություն:

34. Դատախազությունը խոշտանգումների վերաբերյալ ոչ բոլոր հայտարարություններն է ուղարկում ՀՔԾ քննությանը, դրանց հետ դեռևս գործ են ունենում ոստիկանության քննիչները²⁴:
35. Խոշտանգումների վերաբերյալ հաղորդումների պատշաճ քննության պահանջը վտանգվում է ամենակարգից՝ իրավապահ համակարգի նման գործելակերպի հետևանքով: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ խոշտանգումների մասին հաղորդումները քննության են առնվում այն մարմնի կողմից, որի աշխատակիցների կողմից կիրառվել են խոշտանգումները:
36. Դատախազությունը հսկողություն է իրականացնում նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ, ինչպես նաև պաշտպանում է մեղադրանքը դատարանում: Այս իրավիճակը շահերի բախում է առաջացնում: Այդ գործառույթները պետք է տարանջատվեն և փոխանցվեն տարբեր մարմինների:
37. Նույն դատախազը հսկողություն է իրականացնում քննության օրինականության նկատմամբ, հաստատում է քննիչի կողմից ներկայացված մեղադրական եզրակացությունը և պաշտպանում է մեղադրանքը դատարանում: Այսպիսով, նույն դատախազը երեք լիազորություն է ստանձնում մեկ գործի նկատմամբ. այն է՝ վերահսկողություն, հաստատում և պաշտպանություն: Այս փաստը ստեղծում է մի իրավիճակ, որում դատախազը շահագրգռված չէ կանխելու քննության ընթացքում տեղի ունեցած չարաշահումները, քանի որ դատախազին անհրաժեշտ են քննիչի կողմից հավաքված ապացույցները՝ անկախ այն բանից, թե դրանք օրինական են, թե ոչ: Դատախազը նաև շահագրգռված չէ բացառելու ապօրինի ճանապարհով ձեռքբերված ապացույցները, քանի որ ապացույցների անօրինական լինելու փաստի ճանաչումը նշանակում է, որ նրան չի հաջողվել իրականացնել քննության նկատմամբ օրինականության վերահսկողությունը պատշաճ կերպով:

Առաջարկություններ

- *Միջոցներ ձեռնարկել խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի անկախ և արդյունավետ քննության ապահովման համար:*
- *Իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ, որոնք կապահովեն, խոշտանգումների վերաբերյալ բոլոր հայտարարությունների պատշաճ և անհապաղ հաղորդումը ՀՔԾ և քննության իրականացումը ՀՔԾ –ի կողմից:*
- *ՀՔԾ կողմից քննության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող և Ոստիկանության կողմից կատարված քննության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատախազները պետք է տարբեր լինեն:*

²⁴ Նույն փաստաթուղթ, 42–րդ պարբերություն:

- Քննության օրինակականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող և դատարանում մեղադրանքը ներկայացնող դատախազները պետք է տարբեր լինեն:

7. Խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքների անթույլատրելիությունը (Կոնվենցիա, հոդված 15)

38. Հայաստանում դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի միջոցով ցուցմունքներ ձեռք բերելու մասին հայտարարություններն ավելի հաճախ կատարվում են դատական քննության փուլում²⁵:
39. Մակայն պրակտիկայում դատարանները միջոցներ չեն ձեռնարկում այդ հայտարարությունների հիման վրա քրեական հետապնդում իրականացնելու ուղղությամբ: Այս խնդրին անդրադարձ է կատարվել «Հայաստանում դատավարությունների դիտարկման ծրագրի» զեկույցում, որն իրականացվել է 2008թ. ապրիլից մինչև 2009թ. հունիսը²⁶: Դիտորդներն արձանագրել են, որ ամբաստանյալները դատարանում հայտարարել են, որ ձերբակալության ընթացքում ոստիկանները նրանց ծեծի և դաժան, անմարդկային վերաբերմունքի են ենթարկել: Նրանք ապացույցներ են ներկայացրել, այդ թվում՝ լուսանկարներ, բժշկական տեղեկանքներ և այլ նյութեր իրենց հայտարարությունները հիմնավորելու համար:²⁷ Առնվազն 27 մեղադրյալներ հայտարարել են իրավապահ մարմինների կողմից վատ վերաբերմունքի մասին՝ ձերբակալության կամ նախնական կալանքի ընթացքում: Միայն երկու դեպքում նիստը վարող դատավորը դիմել է դատախազին՝ քրեական վարույթ նշանակելու պահանջով, երկու դեպքում էլ վկաները պնդել են, որ իրենց նախաքննական ցուցմունքները ձեռք են բերվել ճնշման արդյունքում: Իրավապահ մարմինների ոչ մի ներկայացուցչի մեղադրանք չի առաջադրվել:²⁸
40. Դատարաններն էապես հիմնվում են ոստիկանական ցուցմունքների վրա: ԵԱՀԿ-ի կողմից դիտարկված 17 գործերով ոստիկան վկաների կողմից տրված ցուցմունքները դատարանում վկաների կողմից տրված միակ ցուցմունքներն են եղել և դրվել են դատարանի որոշումների հիմքում: Որոշ դեպքերում ոստիկանների ցուցմունքներն ընդունվել է դատավորների կողմից, նույնիսկ, երբ դրանք հակասել են այդ վկաների

²⁵ «Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարը, օրենսդրական և դատական պրակտիկայի խնդիրները Հայաստանում», Դավիթ Ավետիսյան, Վահե Ենգիբարյան, Աննա Վարդապետյան, էջ 17, 2010 թ. Երևան, «Անտարես», Եվրախորհրդի Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինություն:

²⁶ ԵԱՀԿ Զեկույց «Հայաստանում դատավարությունների դիտարկման ծրագիր», 2010թ. Վարշավա, էջ 78, <http://www.osce.org/odihr/41695>

²⁷ Նույն փաստաթուղթը:

²⁸ Նույն փաստաթուղթը, էջ 79:

նախաքննական ցուցմունքներին կամ այդ վկաների կողմից դատարանում արված հայտարարություններին կամ ակնհայտորեն չեն համապատասխանել նույն գործով անցնող այլ ծառայողների տված ցուցմունքներին²⁹:

8. Ազատությունից զրկելու պայմանները և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ (Կոնվենցիա, հոդված 16)

41. Հայաստանում գործում է երեք դիտորդական խմբեր, որոնք իրականացնում են փակ հաստատությունների անկախ վերահսկողություն.

(1) ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ (ՔԿՀ Դիտորդական խումբ)

(2) Հայաստանի Հանրապետության Ոստիկանության համակարգի Ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ (Ոստիկանության դիտորդական խումբ) և

(3) 2009 դեկտեմբերի 16-ին ստեղծված Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդների խումբ:

Այս խմբերը կազմված են հասարակական կազմակերպությունների անդամներից, ովքեր խմբերում աշխատում են կամավոր հիմունքներով:

42. Ոստիկանության դիտորդական խմբի գործառնության թերություններից մեկն այն է, որ նա չունի ոստիկանական բաժիններ մուտք գործելու իրավունք, որտեղ ձերբակալվածները ենթարկվում են ճնշումների և սպառնալիքների՝ հարցաքննության ընթացքում: Խումբը կարող է մուտք գործել այն վայրերը, որտեղ պահվում են ձերբակալված անձինք: Հաճախ մարդիկ անօրինական կերպով, օրենսդրությամբ նախատեսված ժամկետներից ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, պահվում են ոստիկանական բաժիններում հարցաքննության ընթացքում: Նման դեպքերը չեն կարող արձանագրվել Ոստիկանության դիտորդական խմբի կողմից այդ վայրեր մուտքի հնարավորություն չունենալու պատճառով:

43. ՔԿՀ Դիտորդական խումբն իր գեկույցներում նշում է վատ կենցաղային պայմանների, հատկապես վատ բուժօգնության և սննդի վատ որակի, ինչպես նաև որոշ

²⁹ ԵԱՀԿ Զեկույց «Հայաստանում դատավարությունների դիտարկման ծրագիր», 2010թ. Վարշավա, էջ 66:

քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցվածության մասին³⁰:

44. Քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցվածությունն այդ համակարգի հրատապ խնդիրներից է: Մասնավորապես, ստորև ներկայացված տվյալները ցույց են տալիս հնարավոր և առկա դատապարտյալների և կալանավորված անձանց թիվը Հայաստանի հինգ քրեակատարողական հիմնարկներում 2012թ. հունվարի 1-ի դրությամբ:

Քրեակատարողական հիմնարկներ	Ծավալը	Փաստացի թիվը
«Նուբարաշեն»	840	1157
«Վարդաշեն»	154	218
«Էրեբունի»	391	420
«Սևան»	548	608
«Կոշ»	640	796

Աղբյուր՝ տվյալները տրամադրվել են Քրեակատարողական հիմնարկների դիտորդական խմբի կողմից

45. Ազատազրկված անձանց համար չեն ապահովվում բավարար քանակի քնելու տեղեր: Արդյունքում, նրանք ստիպված են հերթով քնել՝ ոմանք գիշերը, ոմանք՝ ցերեկը: Յուրաքանչյուր անձին տրամադրվում է երկու քառակուսի մետրից փոքր տարածք, մինչդեռ ազգային և միջազգային չափանիշները պահանջում են առնվազն չորս քառակուսի մետր յուրաքանչյուր անձի համար³¹: Բացի այդ, ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 106 (1) հոդվածի համաձայն փակ տիպի հիմնարկում կարող են պահվել մինչև չորս մարդ, իսկ կիսափակ տիպի հիմնարկում կարող են պահվել մինչև վեց մարդ /հոդված 105 (1)/: Այս դրույթները նույնպես խախտվում են:

46. Գերբնակեցվածության պատճառով օրինակ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում խցերում տեղադրվել են լրացուցիչ 2-4 մահճակալներ, իսկ ՔԿՀ դիտորդական խումբը հանդիպել է խցերից մեկում 13 և 18 դատապարտյալ՝ 8 հոգու

³⁰ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հաշվետվություն, 2009թ. Երևան, էջ 8-9, http://www.hra.am/i/up/PMG_Report_2008_arm.pdf:

³¹ Եվրոպական բանտային կանոնների 18 կանոնի վերաբերյալ առաջարկությունը ընդգծում է, որ ԽԿԿ-ն համարում է չորս քառակուսի մետրը որպես նվազագույն պահանջ ընդհանուր սենյակում և վեց քառակուսի մետր բանտախցում:

համար նախատեսված խցում³²:

47. Գերբնակեցվածության հիմքում ընկած են հետևյալ պատճառները՝ հանցագործությունների թվի աճը, դատարանների կողմից կալանավորում խափանման միջոցի չափազանց լայն կիրառումը, այլընտրանքային պատիժների ոչ բավարար կիրառումը, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատման սակավ կիրառումը³³:
48. Քրեակատարողական հիմնարկներում ազատագրված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումները դժվար է բացահայտել: Փորձը ցույց է տալիս, որ ՔԿՀ դիտորդական խմբի կողմից հայտնաբերված վատ վերաբերմունքի դեպքերի առնչությամբ համապատասխան քրեակատարողական հիմնարկը չի կարողացել արձանագրել հատուկ միջոցների կիրառումը, /ձեռնաշղթաներ, մահակներ և այլն/ իսկ բուժանձնակազմը չի արձանագրել ազատությունից զրկված անձանց մոտ առկա վնասվածքները:
49. Քրեակատարողական հիմնարկներում խոշտանգումների հիմքում ընկած է վատ վարքի համար պատիժը:

Մեր կողմից գրանցված վերջին դեպքը տեղի է ունեցել 2008 թ. դեկտեմբերին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, որտեղ խուզարկության ժամանակ լուրջ բախում է տեղի ունեցել դատապարտյալների և Արագ արձագանքման խմբի միջև: Այդ բախումների ժամանակ դատապարտյալներից շատերը դաժան ծեծի են ենթարկվել և Արագ արձագանքման խմբի ղեկավարը վնասվածքներ է ստացել: Դրա արդյունքում խցի բոլոր դատապարտյալները տևական բռնության և ծեծի են ենթարկվել: ՔԿՀ Դիտորդական խումբը որակել է միջադեպը որպես խոշտանգում, որը կիրառվել է որպես պատժի միջոց³⁴: ՔԿՀ Դիտորդական խմբի հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործ: Այնուհետև, 2009թ. ապրիլի 28-ին գործը կարճվել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողություններում հանցակազմի բացակայության հիմքերով:

50. Մի շարք թերություններ են արձանագրվել ծանր հիվանդության պատճառով

³² ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հաշվետվություն, 2009թ. Երևան, էջ 23 http://www.hra.am/i/up/PMG_Report_2008_arm.pdf:

³³ 14 Հ Կ-ների, այդ թվում ՔՀԻ հայտարարությունը քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածության վերաբերյալ, 2010թ. հուլիսի 26:

³⁴ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հաշվետվություն, 2009թ. , Երևան, էջ 10, http://www.hra.am/i/up/PMG_Report_2008_arm.pdf:

վաղաժամկետ ազատման համակարգում: Մասնավորապես, որոշում կայացնող բազմաթիվ մարմինների, հստակ և մատչելի ընթացակարգերի բացակայության պատճառով ազատազրկվածների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործընթացն անհարգի ձգձգվում է: Այդ ձգձգումները բացասաբար են անդրադառնում անազատության մեջ գտնվող անձանց առողջության վրա, որոնց տառապանքները շարունակվում են վաղաժամկետ ազատման վերաբերյալ դրական կամ բացասական որոշումների ուշացման պատճառով: Ազատազրկվածների վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշումները հաճախ անհիմն են: Այդ որոշումների համար հիմքերը սահմանված չեն:

51. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը (խոշտանգումների և դաժան, անմարդկային վերաբերմունքի կանխարգելում) կարող է մեկնաբանվել այնպես, որ ծանր հիվանդ կամ անդամալույծ դատապարտյալը պետք է պայմանականորեն ազատ արձակվի³⁵:

Մանուկյան Ռուզանն ազատազրկվել է 2008թ. դեկտեմբերի 12-ին, 2008թ. դեկտեմբերի 15-ին նրան տեղափոխել են «Գրիգոր Լուսավորիչ» քաղաքացիական հիվանդանոց: Ազատազրկման ընթացքում նա 8 անգամ տեղափոխվել էր հիվանդանոց և ընդհանուր առմամբ անցկացրել այնտեղ 548 օր: Բժիշկներն ախտորոշել էին Ռուզանի մոտ ծանր քրոնիկ աստմա: Այդ հիվանդությունը ներառված էր ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների ցանկում, որի համաձայն անձը կարող է ազատվել պատժի կրումից: Այնուամենայնիվ, 2010 թ. Բժշկական աշխատանքային հանձնաժողովը, ուսումնասիրելով հիվանդանոցի բժիշկների եզրակացությունները, որոշում կայացրեց, որ Ռուզանին անհրաժեշտ է լրացուցիչ բժշկական քննություն: Մակայն Հանձնաժողովը չէր հստակեցրել, թե ինչ տեսակի քննություն պետք է անցկացնել: Ռուզանի վերաբերյալ հետագա քայլեր չեն ձեռնարկվել: Սույն զեկույցը գրելու ժամանակ /2012թ. ապրիլ/, նա դեռևս քրեակատարողական հիմնարկում է:

9. Բողոք ներկայացնելու մեխանիզմները քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց համար (Կոնվենցիա, հոդված 13)

52. Քրեակատարողական հիմնարկներում բողոք ներկայացնելու մեխանիզմն արդյունավետ չէ: Բողոքի նամակները բացվում և ընթերցվում են հիմնարկի վարչակազմի կողմից: Պրակտիկայում այդ նամակների վրա կնիք է դրվում, որից

³⁵ Ալեքսանյանն ընդդեմ Ռուսաստանի, [2008] ՄԻԵԴ, թիվ 46468/06, 136-րդ պարբերություն:

հետո դրանք դրվում են ծրարների մեջ³⁶: Գաղտնիության բացակայությունը սահմանափակում է բողոքների ներկայացման հնարավորությունը:

10. Կոմիտեի կողմից նշված կոնկրետ գործերի վերաբերյալ տեղեկություններ

53. Կոմիտեն պահանջել էր տեղեկություններ տրամադրել մի շարք անհատական գործերի քննության և քրեական վարույթների վերաբերյալ: Ի պատասխան այդ պահանջի ներկայացվում է հետևյալ տեղեկությունը.

Լևոն Գուլյան

2012թ. մայիսի 12-ին լրանում է Լևոն Գուլյանի մահվան հինգերորդ տարելիցը: Մինչ օրս պետական ոչ մի պաշտոնյա չի ենթարկվել պատասխանատվության նրա մահվան համար:

Լևոն Գուլյանը դարձել է սպանության վկա: 2007թ. մայիսի 9-ին նրան հրավիրել են ոստիկանության բաժին և, չնայած նա արդեն իսկ ցուցմունք էր տվել, պահվել էր այնտեղ մինչև 2007թ. մայիսի 10-ի երեկո: Դրանից հետո նրան երկու անգամ թույլ են տվել տուն գնալ, սակայն պահանջել են, որ վերադառնա: Երկու դեպքում էլ Լևոն Գուլյանը ենթարկվել է պահանջին:

2007 թվականի մայիսի 12-ին Լևոն Գուլյանը մահացել է ՀՀ ոստիկանության վարչական շենքում: Ոստիկանության ծառայողները պնդել են, որ Գուլյանն ինքնասպան է եղել կամ փորձել է փախչել՝ ցատկելով երկրորդ հարկից:

Գուլյանի հարազատները կապտուկներ էին տեսել նրա մարմնի վրա, երբ նա տուն էր վերադարձել, իսկ փաստաբանները, որոնք ներկա են գտնվել դիակի դատաբժշկական փորձաքննությանը, հայտնել են, որ մարմնի վրա բռնության հետքեր են եղել:

2007թ. ի վեր իրականացվում է նախաքննություն, որի ընթացքում գործը մի քանի անգամ կարճվել է նախաքննություն իրականացնող մարմնի կողմից և վերաբացվել է դատարանների որոշումներով:

2011 թ. մարտի 21-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունը երրորդ անգամ կարճեց Լևոն Գուլյանի մահվան առթիվ հարուցված քրեական գործը: Մա լրջորեն հակասում էր ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի որոշմանը, որը

³⁶ Այս տեղեկությունը տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի փորձագետի կողմից:

պահանջում էր «վերացնել նախաքննության ընթացքում թույլ տրված անձի իրավունքների և ազատությունների խախտումները»:

ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման համաձայն Լևոն Գուլյանի գործի քննությունը լիարժեք և արդյունավետ չի իրականացվել: Դատարանը պարտավորեցրել է Հատուկ քննչական ծառայությանը մի շարք գործողություններ իրականացնել գործի քննության շրջանակներում, այդ թվում՝ Լ.Գուլյանի վայր ընկնելու մեխանիզմը պարզելու նպատակով քննչական փորձարարություն մանեկենի օգտագործմամբ:

Դատարանի որոշումն անտեսվել է Հատուկ քննչական ծառայության կողմից, և այդ քննչական գործողությունները չեն իրականացվել: Գործը կարճելու մասին ՀՔԾ որոշումը կրկին բողոքարկվել է Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններում: 2011 թվականի մայիսին դատարանը բավարարել է բողոքը և պարտավորեցրել Հատուկ քննչական ծառայությանը վերսկսել գործի քննությունը: Մի շարք հասարակական կազմակերպություններ հանդես են եկել գործի վերաբերյալ հայտարարությամբ³⁷:

Սաշա Դավթյան

2008թ. սեպտեմբերին քրեական գործ է հարուցվել անչափահաս աղջկան բռնաբարելու փաստի կապակցությամբ: 2009թ. փետրվարի 6-ին գործը կասեցվել էր՝ հանցագործի անձը պարզված չլինելու հիմքով: 2009թ. մայիսին դատական այս գործի քննությունը վերսկսվեց այլ քննիչի կողմից: Սաշա Դավթյանը՝ աղջկա հայրը, մեղադրվում էր իր դուստր Շ.Դ.-ին բռնաբարելու և իր երկու դուստրերին՝ Շ.Դ.-ին և Թ.Դ.-ին խոշտանգելու մեջ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138.2 (3) 119.2 (1) և 119.2 (3) հոդվածներով:

2009թ. օգոստոսին Շ.Դ.-ն և Թ.Դ.-ն հրաժարվեցին իրենց ցուցմունքներից և բողոք ներկայացրեցին Գլխավոր Դատախազություն: Շ.Դ.-ն դատարանում հայտնեց, որ իրեն և իր քրոջը՝ Թ.Դ.-ին, Կենտրոն ոստիկանություն են տարել 2009թ. մայիսի 7-ին և չորս օր շարունակ ենթարկել են խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ստիպել են ցուցմունքներ տալ, որ Սաշա Դավթյանն իսկապես խոշտանգել է և բռնաբարել է Շ.Դ.-ին: Ֆիզիկական բռնությունների արդյունքում կորզված ցուցմունքները դրվել են Սաշա Դավթյանի դեմ բերված մեղադրանքի հիմքում:

Սաշա Դավթյանին նույնպես պարբերաբար ծեծի և խոշտանգումների են ենթարկել:

³⁷ ՀԿ-ների, այդ թվում ՔՀԻ 2011թ. մայիսի 12-ին հրապարակված հայտարարություն
<http://hra.am/hy/events/2011/05/12/statement>:

2010թ. փետրվարի 5-ին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) նախագահ Մուեր Բելասենը Քաղաքացիական հասարակության ինստիտուտի (ՔՀԻ) նախագահ Արման Դանիելյանի հետ այցելել են քրեակատարողական հիմնարկ՝ Սաշա Դավթյանի հետ հանդիպելու: Նրանք արձանագրել են, որ վերջինս ենթարկվել է արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, և 8 ատամները կոտրվել են ծեծի արդյունքում: Նրանք նաև հանդիպել են «Նուբարաշենի» քրեակատարողական հիմնարկի ղեկավարի և բժշկի հետ, ով ներկայացրել է բժշկական փաստաթղթերը՝ հաստատելով, որ քրեակատարողական հիմնարկ ընդունելիս պրն. Դավթյանը շատ վատ առողջական վիճակ է ունեցել:

2009թ. դեկտեմբերի 17-ին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը Սաշա Դավթյանին՝ իր դատերը բռնաբարելու մեղադրանքի մասով արդարացրել է, սակայն մեղավոր է ճանաչել իր դատերի հանդեպ վատ վերաբերմունքի մեղադրանքով: Սաշա Դավթյանը դատապարտվել է 4 տարվա ազատազրկման՝ 119.2/1/ հոդվածի հիման վրա: Դատավճիռը բողոքարկվել է, որի արդյունքում պատժաչափը նվազեցվել է և սահմանվել է 3 տարվա ազատազրկում: Ազգային Ժողովի կողմից ընդունված համաներման ակտի հիման վրա Սաշա Դավթյանն ազատ է արձակվել:

Սաշա Դավթյանին և նրա դուստրերին խոշտանգումների ենթարկած ոստիկաններից որևէ մեկն առ այսօր պատասխանատվության չի ենթարկվել:

Վահան Խալաֆյան

2010 թվականի ապրիլի 13-ին ժամը 17:00-ի սահմաններում 24-ամյա Վահան Խալաֆյանը մահացել է ոստիկանության Չարենցավանի բաժնում՝ դանակով որովայնին հասցված մահացու վնասվածքներից: Խալաֆյանի իրավահաջորդները պնդում են, որ Վահանը չէր կարող երկու անգամ դանակով հարվածել որովայնին, հետևաբար նրան սպանել են:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ Վահան Խալաֆյանն ինքնասպանություն է գործել հարվածելով ինքն իրեն: Դատարանը նաև համարել է, որ Վահան Խալաֆյանին ծեծի է ենթարկել Չարենցավանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Աշոտ Հարությունյանը: Վերջինս մեղավոր է ճանաչվել բռնության միջոցով խոստովանական ցուցմունք կորզելու համար՝ անցնելով պաշտոնական լիազորությունները, որն անզուգույնյամբ առաջացրել է ծանր հետևանքներ: Նրան դատապարտել են 8 տարվա ազատազրկման ՀՀ Քրեական օրենսգրքի 309-3 հոդվածով: Դատարանը համարել է, որ Հարությունյանի գործողություններն այնպիսի հոգեբանական լարվածություն են ստեղծել Վահան Խալաֆյանի մոտ, որոնք հանգեցրել են ինքնասպանության՝ որովայնի շրջանում երկու անգամ դանակով հարվածելու միջոցով: Քրեական հետախուզության բաժնի

նստիկան Մորիս Հայրապետյանը դատապարտվել է երկու տարվա պայմանական ազատազրկման /պաշտոնական լիազորություններն անցնելը/: Նա ներկա է գտնվել Խալաֆյանին ծեծի ենթարկելու ժամանակ և չի կանխել այդ գործողությունները: Բացի այդ, Հայրապետյանը ստորագրել է Խալաֆյանին ոստիկանության բաժին 17.00-ին բերելու մասին արձանագրությունը, մինչդեռ Խալաֆյանն արդեն իսկ բաժնում էր 2010թ. ապրիլի 13-ի առավոտյան ժամը 10:00-ից:

2011 մայիսի 26-ին երկու դատապարտյալների նկատմամբ կիրառվեց համաներման մասին որոշումը: Աշոտ Հարությունյանի պատժի չկրած մասը կրճատվեց մեկ երրորդով:

Արտակ Նազարյան

Արտակ Նազարյանը ՀՀ զինված ուժերում պայմանագրային ծառայության է անցել 2009թ. դեկտեմբերից: 2010թ. հուլիսի 27-ին ծառայության վայրում պաշտոնական վարկածով ինքնասպան է եղել: Սակայն հարազատները պնդում են, որ նա սպանվել է: Դեպքը տեղի է ունեցել Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի Չինարի գյուղից ոչ հեռու տեղակայված «Մեհրաբներ» գորամասի հսկողությանը հանձնված մարտական հենակետերից մեկում:

Գործը դատարան է մտել «ինքնասպանության դրդում» որակմամբ: 2011թ. սեպտեմբերին սկսվել է դատական գործընթացը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում:

Նազարյանները պնդում են, որ նախաքննությունը կատարվել է հանցավոր թերություններով՝ ընդհուպ մինչև ապացույցների ոչնչացում և կեղծում. իրեղեն ապացույց պարկուճի ոչնչացում և փորձագետին կեղծ պարկուճի ներկայացում, նախաքննական մարմնի կողմից ինքնաձիգի վրայից մատնահետքերի ոչնչացում, դատաբժշկական կենտրոնի կողմից ուղարկված փաստաթուղթ լուսանկարներից երեքի ոչնչացում և այլն:

Ավելին, Նազարյանները կասկածներ ունեն իրենց որդու մահվան վայրի և օրվա վերաբերյալ: Տեղագնության և դատաբժշկական փորձաքննության բոլոր լուսանկարները տրամադրելու տուժողի միջնորդությունները քննչական մարմինը մերժել է՝ պատճառաբանելով, որ նախաքննական գաղտնիք են պարունակում: Տրամադրվել են միայն փորձաքննություններ կատարելու որոշումները և դրանց եզրակացությունները: Դատաբժշկական փորձաքննությամբ՝ 54 վնասվածք կա Նազարյանի մարմնի տարբեր մասերում: Քննչական ոչ մի գործողություն չի կատարվել պարզելու դրանց պատճառը:

Նազարյանի ընտանիքը չի հասկանում նաև, թե ինչո՞վ է ինքնասպան եղել Նազարյանը, եթե նրա ստացած 120 փամփուշտները տեղում են եղել: Դեպքից 12 օր հետո Նազարյանի գումարտակի հրամանատար Միշա Գաբրիելյանը քննչական մարմնին է հանձնել Արտակի ծոցատետրը, որում դրված է եղել ինքնասպանության գրություն, որն իբր Արտակ Նազարյանը հղել է Ոստիկանությանը: Տուժող կողմի պնդմամբ՝ գրության ձեռագիրը տարբերվում է Արտակի ձեռագրից: Դատավարությունը շարունակվում է:

Տիգրան Օհանջանյան

2007 թվականի օգոստոսի 30-ին Գեղարքունիքի մարզի գյուղ Կարճաղբյուրի գործառնում մահացել է ժամկետային զինծառայող կրտսեր սերժանտ Տիգրան Օհանջանյանը: Դեպքի առթիվ 2007 թվականի օգոստոսի 31-ին քրեական գործ է հարուցվել, և նախաքննություն է ձեռնարկվել: Արդյունքում, մահվան պատճառ է արձանագրվել էլեկտրահարումը, և մեղադրանք է ներկայացվել գործառնի կապի հանգույցի աշխատակիցներ Կարեն Թովմասյանին և Ռուստամ Ասատրյանին:

2008թ. մայիսի 30-ին գործը հանձնվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարան: 2010թ. հունվարի 13-ին դատարանն արդարացման վճիռ կայացրեց Ռուստամ Ասատրյանի և Կարեն Թովմասյանի նկատմամբ՝ ոչ բավարար ապացույցների հիմքով: Դատախազությունը բողոք ներկայացրեց այդ որոշման դեմ ՀՀ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններ: 2010թ. մարտի 3-ին Վերաքննիչ դատարանն անփոփոխ թողեց առաջին ատյանի դատարանի որոշումը: 2010թ. հունիսի 7 -ին ՀՀ Վերաքննիչ դատարանը որոշում ընդունեց վերսկսելու գործի քննությունը:

Օհանջանյանի ծնողները պնդում են, որ դատաբժշկական փորձաքննությամբ չեն արձանագրվել Տիգրանի մարմնի վրա առկա բոլոր վնասվածքները. նշված չէր, որ Օհանջանյանի ձախ ակնջը վնասված էր, ուռած, կարմրած և տարբերվում էր աջից: Նշված չէր, որ մահացածի մատներն ափի կողմից կապտած էին: Բացի այդ, բանակ զորակոչվելիս, Օհանջանյանը չունեի առջևի կտրող ատամներից մեկը, իսկ դատաբժիշկն արձանագրել էր, որ վերևի ատամնաշարն ամբողջական էր:

Առողջապահության նախարարի 10.09.2010թ. հրամանով ձևավորվել էր 10 փորձագետից բաղկացած հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր գործով եղած ապացույցները և հայտնաբերեր մահվան իրական պատճառը: Ձևավորված հանձնաժողովը հաստատել է դատաբժշկական փորձաքննության արձանագրածը: Սակայն Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի 4 փորձագետների եզրակացության համաձայն՝ Ռ-419 ռադիոէլեկտրոնային սարքի ենթաբլոկն ընդունակ չէ արտադրել 180 Վ լարում, հետևաբար չի կարող դառնալ հոսանքահարման

պատճառ (հոսանքահարման վարկածով՝ Ռ-419 սարքի ենթաբլոկից դուրս եկող հոսանքն է մահվան պատճառը):

Նախաքննությունը շարունակվում է:

11. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

54. Խոշտանգումը հատկապես ուստիկանությունում, շարունակում է սուր խնդիր մնալ Հայաստանի Հանրապետությունում: Խոշտանգման համար քչերն են հետապնդվել և ավելի քիչ մարդ դատապարտվել է այդ հանցագործության համար: Այս իրավիճակն արտացոլում է քննչական մեթոդների և պատասխանատվության առաջ կանգնեցնելու մեխանիզմների լուրջ թերությունները, որոնք ի վերջո հանգեցնում է անպատժելիության:
55. Հայաստանի իշխանություններն այլ միջոցների հետ մեկտեղ պետք է կարգավորեն հետևյալ խնդիրները՝ Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները կատարելու համար:

Պետությանն ուղղված առաջարկություններ.

- Փոփոխություններ կատարել Քրեական օրենսգրքում և համապատասխան օրենսդրության մեջ՝ համապատասխանեցնելով խոշտանգման սահմանումը Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին:
- Ապահովել ներքին և արտաքին բողոքներ ներկայացնելու արդյունավետ մեխանիզմի կիրառում, այդ թվում՝ գաղտնի բողոքների համար:
- Ձեռնարկել միջոցներ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի անկախ, արդյունավետ քննություն համար:
- Իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ, որոնք կապահովեն խոշտանգումների վերաբերյալ բոլոր հայտարարությունների պատշաճ և անհապաղ հաղորդումը ՀՔԾ և քննության իրականացումը ՀՔԾ –ի կողմից:
- ՀՔԾ կողմից քննության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող և Ոստիկանության կողմից կատարված քննության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատախազները պետք է տարբեր լինեն:
- Քննության օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող և

դատարանում մեղադրանքը ներկայացնող դատախազները պետք է տարբեր լինեն:

- Իրականացնել դատական համակարգի բարեփոխումներ՝ պաշտպան ունենալու, հարազատներին տեղեկացնելու, իրավունքների մասին իրազեկված լինելու, բուժզննություն ստանալու և այլ իրավունքներն անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից՝ անկախ օրենքով նախատեսված իր իրավական կարգավիճակից:
- Գործնական միջոցներ ձեռնարկել մինչդատական վարույթի սկզբնական փուլից պաշտպանի ներգրավումն ապահովելու համար:
- Լրացում կատարել Քրեական դատավարության օրենսգրքում, որի համաձայն բոլոր այն դեպքերում, երբ անձը հարցաքննվել է պաշտպանի բացակայությամբ, նույնիսկ այն դեպքերում, երբ անձը հրաժարվել է պաշտպանի մասնակցությունից, գրավոր ցուցմունքը չի կարող ապացույց համարվել, եթե հարցաքննված անձը չի հաստատել այդ ցուցմունքը դատարանի առջև:
- Կատարել օրենսդրական փոփոխություններ, որոնք թույլ կտան բացառել «արատավորված» ապացույցները, եթե դատավորը հիմնավոր կասկած ունի դրանց ձեռքբերման միջոցների օրինականության վերաբերյալ:
- Ապահովել կալանավորված և ձերբակալված անձանց բուժզննությունը ոստիկանության և քրեակատարողական համակարգի ծառայողների լսողության և տեսողության սահմաններից դուրս, ինչպես դա նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ:
- Ապահովել ձերբակալված անձանց բժշկական փաստաթղթերի և եզրակացության անհապաղ տրամադրումը պաշտպանին:
- Հնարավորություն ստեղծել, որպեսզի անկախ բժիշկները ստանան դատաբժշկի որակավորում և իրավունք ընձեռել ձերբակալվածներին բժշկական զննություն անցնել անկախ մասնագետի մոտ՝ առանց քննիչից, դատախազից կամ դատավորից նախնական թույլտվություն ստանալու:
- Ապահովել ոստիկանության դիտորդական խմբի մուտքը ոստիկանության բաժիններ, որտեղ տեղի են ունենում խոշտանգումների հիմնական դեպքերը: